

16778

ՀԻՄՆ ԵՒ ԾՐԱԿՈՒՄ ԵՐԱՅԻՆ

ՍԵՂ. ԿՈՒՐՄ. ԳՐԱԳՐԱԾ



ՀԻՐՈՎ

Յոյ.Քոչչուսանի Եւրոպացեանի
Տ. Սի Տի Գրգոթքք

1928

362

L-58

362

L-58

սօ

- 1 -

31555-42

ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԼԻՕՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԹԵՄԵՐՈՒ
ԱԶԳ. ԳԱԻԱՌ. ԺՈՂՈՎՈՅ

1006
10476
9007

Յօդ. 1.— Դիօնի եւ շրջակայից Գաւառ. Ընդհ. Ժողովը կը կազմուի համեմատ սեղական պահանջներու պարտադիր պայմաններուն ժողովրդական ազատութեան քննարկութեամբ. ընտրուած կեդրոնէն, 12, եւ շրջականներէն ընտրելի 11 երեսփոխաններով, ու կ'ենթարկուի Պետական վաւերացման ու կը սեղեկագրուի Ազգ. Նկեղեց. բարձր իշխանութեան :

Յօդ. 2.— Գաւառ. Ընդհ. Ժողովոյ պաշտօնն է.
Ա.— Կազմել Ազգ. Կեդր. վարչութեան — գործադիր իշխանութիւն 5—9 անձերէ բաղկացեալ, գաղութի ծանօթ ու փորձառու Ազգայիններէն:

2010

2002

~~8034~~

15049-58

Բ.— Ընտրել տեղական կրօնապետ — Առաջնորդը, ու ենթարկել զայն եկեղց. բարձրագոյն իշխանութեան վաւերացման :

Գ.— Կազմել տարեկան պիւսնէն համապատասխան Ազգ. Կեդր. Վարչութեան ներկայացուցած պահանջներուն :

Դ.— Կազմել կանոնագիր — ծրագիր մը եւ պատասել սակացոյց մը. Ազգ. Կեդր. վարչութեան եւ սոյն Վարչութեան միջոցաւ կազմուելիք կրթական, կրօնական, ֆեստական, դաստաստական, Աղտաստանամ, կարմիր խաչ, եւլն. մարմիններու կողմէ գործադրելի :

Ե.— Սահմանաւորել շրջաններու վարչութեանց իրաւասութիւնները, նշել անոնց ամսական վճարումի մասնակցութեան քանակը, կեդրոնական սնուկին :

Զ.— Լսել առաջնորդի մասին եղած օրինաւոր զանգասները եւ չալ համապատասխան որոշումներ :

Յօդ. 3.— Գաւառ. Ընդհ. ժողովը ունի չորս տարւոյ նստաշրջան ու անդամները վերընտրելի են :

Յօդ. 4.— Գաւառ. Ընդհ. ժողովը կ'ունենայ իր մնայուն ղիւանը. Ա. Բ. Ասենապետ Ա. Բ. Ասենադպիր, որոնք կ'ընտրուին զազանի քուէարկութեամբ :

Յօդ. 5.— Գաւառ. Ընդհ. ժողովը առ նուազն տարին

երկու անգամ լիազումար նիստ կ'ունենայ եւ կը լսէ վեցամսեայ համարատուութիւնը Ազգ. Կեդր. Վարչութեան եւ սոյն վարչութեան միջոցաւ ծնունդ տուած մարմիններու գործառնութեանց :

Յօդ. 6.— Գաւառ. ժողովը բացառաբար նիստ կը գումարէ իր ղիւանին հրաւերով, ինչպէս նաեւ հետեւեալ երեք պարագաներու մէջ :

Ա.— Ազգ. Կեդր. վարչութեան կողմէ ներկայացուած խնդրանքով կամ անոր լուծման ու հրաժարման պարագային :

Բ.— Ազգ. Կեդր. վարչութեան եւ նոյնին միջոցաւ կազմուած մարմիններու միջեւ քիւրիմացութեան մը հետեւանքով բարդութեանց բարձման անհրաժեշտութեան պարագային :

Գ.— Գաւառ. ժողովոյ անդամոց մեծամասնութեան պահանջով :

Յօդ. 7.— Գաւառ. ընդհ. ժողովը օրինաւոր կը նկատուի երբ ընտրուած երեսփոխաններուն կէսէն մէկ աւելին ներկայ է :

Յօդ. 8.— Գաւառ. ընդհ. ժողովը որոշումներ կ'իւրացնէ պարզ մեծամասնութեանը, սակայն ներկայ կանոնագիր — ծրագրի տրամադրութեանց. մէջ փոփոխութիւն կը մտնէ միայն 2-3 ի մեծամասնութեամբ :

Յօդ. 9.— Գաւառ. ընդհ. ժողովը պակասած երեսփոխաններուն տեղ նորեր ընտրելու հրահանգ

կուսայ: Նաեւ առանց բանաւոր պատճառի յաջորդաբար 3 անգամ բացակայող երեսփոխանին կը դրկուի դիտողագիր մը. 4 ռդ. ին ժողովէն կրկին բացակայութեան ազդարարագիր 5 ռդ. ին հրաժարեալ կը նկատուի:

Կ Ա Չ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդ. 10.— Ազգ. կեդր. վարչութիւնը ծնունդ առած ըլլալով գաւառ. ժողովէն. համարասու եւ ենթակայ է անոր, ուղղակի կերպով եւ կ'ունենայ երկու սարի նստաշջան:

Յօդ. 11.— Ազգ. կեդր. վարչութիւնը առաւելապէս լծուած ըլլալով գաղութիս եւ շրջակայքներու հայ հասարակութեան Ազգային, կրօնական, բարոյական ու նիւթական բազմանիւղ պէտքերուն բաւարարութիւն սալու կենցական գործին. ի հարկին պահանջներու ցուցմու հով կը կազմէ հետեւեալ մարմինները որոնք ենթակայ ու համարասու են Ազգ. կեդր. վարչութեան:

- Ա. Եկեղեցական հոգաբարձութիւն
- Բ. Կրթական Մարմին
- Գ. Կրօնական ժողով
- Դ. Տնտեսական Խորհուրդ
- Ե. Գրաստանական Խորհուրդ
- Զ. Աղբասախնամ Մարմին
- Է. Տեղական Կարմիր Խաչ

Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդ. 12.— Ազգ. կեդր. վարչութիւնը հասարակաց պէտքերուն համապատասխան մարմիններու միջեւ կատարելէ յետոյ աշխատանքի բաժանումը՝ ըստ ներկայ կանոնագրի սրամադուրեանց, իւրաքանչիւր մարմնի պարտականութեանց բարեւոք կիրարկման վերահսկելով հանդերձ կը հրահանգէ բոլոր Ազգ. կազմակերպութիւնները որ իրենց դրամները պահ դնեն դրամատուններու մէջ Աստեապետներու եւ Գանձապետներու ստորագրութեամբ: Կ'ընէ յանուն գաղութիս պատշտական դիմումներ, Պետական շրջանակներու եւ իհարկին գործարանատեղիներու մօտ, ներկայացնելով զանազան խնդրանքներ:

Բ.— Կուսայ ինքնութեան քուղքերու սերքիճիքներ. դիմող իւրաքանչիւր հայ անհատի. համապատասխան ներկայացուած պահանջի, Գանձելով փոխադարձաբար ըստ սակացոյցի որոշ գումարով յ'օգուտ Ազգ. Եկեղեցւոյ սնուկին:

Գ.— Կը հրաւիրէ իբր փոքրամասնութիւններ յարանուանութեանց ներկայացուցիչները, որպէս գործակիցներ. զուտ Ազգային գէտնի վրայ:

Դ.— Կը զանձէ իւրաքանչիւր շրջանի կեդր. սնուկին բերելիք ամսական վճարումները եւ փոխադարձաբար գոհացում կուսայ շր-

ջաններու հոգեւոր ու բարոյական պահանջներուն. զանոնք պահելով միշտ կեդրոնի կապուած իրենց բոլոր գործառնութեամբ ըստ ծրագրի տրամադրութեանց :

Ե.— Կը քաջալերէ ազգօգուտ ամէն կազմակերպութիւն. վաւերացնելով անոնց մշակած Կանոնագիր - Ծրագիրները, ՚ի հնարկին գորավիճի հանդիսանալով ամոնց ձեռնարկներուն յաջողութեան, պայմանաւ սակայն որ անոնք տեղեկագրեն առ ՚ի վաւերացում Ազգ. Կեդր. Վարչութեան իրենց կազմութեան եղանակն ու նպատակը : Այլապէս անոնց գոյութիւնը կ'անտեսուի :

Զ.— Ամէն կազմակերպութիւն երբ որեւէ պատշտական վկայաբույր պահանջէ, պարտքի իր կողմէ պատրաստուած հայերէն հաստատագրով դիմէ Ազգ. Կեդր. Վարչութեան, նոյնը կիրարկելի է մասնաճիւղերու վարչութեանց համար, եւ առ այս փոխադարձաբար Ազգ. Կեդր. Վարչութիւնը մասնաւորապէս հայրենակցական միութիւններու հեղինակութիւնը բարձր պահելու համար, զանազան առթիւ, հայրենակիցներէն անպայման կը պահանջէ իրենց պատկանած միութեան հաստատագիրը. ըստ այնմ ընթացքի տրուած համար խնդրարկուի ներկայացուցած պահանջին :

Յօդ. 13.— Ազգ. Կեդր. վարչութիւնը ըստ աշխատանքի

շաբաթը մէկ անգամ ժողով կը գումարէ:

Յօդ. 14.— Ազգ. Կեդր. վարչութիւնը կ'ունենայ վնասեալ ֆարսուղար մը. ինչպէս նաեւ պահանջուած ֆանակութեամբ եկեղեցական պատշտեաններ, գրական եւ ծիսական ամէն աշխատանք կատարելու համար :

Յօդ. 15.— Ազգ. Կեդր. վարչութիւնը կը հրահանգէ շրջանները, ստեղծելու համար շրջանային վարչութիւններ տեղական ազատութեամբ եւ օրինական պայմաններու լրացմամբ կը վաւերացնէ զանոնք :

Շ Ր Զ Ա Ն Ն Ե Ր

Յօդ. 16.— Շրջանները որպէս մասնաճիւղ պատրաստուեն տարեկան վնասումով մը (նուազագոյն երեք հարիւր ֆր.) մասնակցիլ կեդրոնական սնունդին:

Յօդ. 17.— Մասնաճիւղերը պակի, մկրտութեան եւ յուղարկաւորութեան հրահանգները կ'ստանան միմիայն Ազգ. Կեդր. վարչութիւնէն: Այս առթիւ ըստ սակացոյցի ըլլալիք վնասումին միայն % ին 25 ը իրենց կը վերաբերի, յարակից (նախապահածախօք) եւ այլն ենթակային կը պատկանի :

Յօդ. 18.— Մասնաճիւղերը սերքի ֆիւսներ (ակդ սրեւոնս) տալու իրաւաստութիւն չ'ունին կառավարութեան, զայն կ'ստանան իրենց կողմէ հայերէն հաստատագրով մը միայն Ազգ.

Կեդրոնական վարչութեան :

Յօդ. 19. — Մասնահիւղերու վարչութիւնները ենթակայ ըլլալով Ազգ. Կեդր. վարչութեան, կ'ունան իրենց իւրաքանչիւր վեցամսեայ գործառնութեանց համարաւսուութիւնը .

Յօդ. 20. — Մասնահիւղերու վարչութիւնք իրենց մեծամասնութիւնը կորսնցնելու պարագային . Ազգ. Կեդր. վարչութիւնը հրահանգ կուսայ 'ի նորոյ ընտրութեան եւ կամ առժամեայ նշանակողի մարմին մը կը կազմէ : Մասնահիւղեր չի գտնուած տեղեր . Ազգ. Կեդր. վարչութիւնն ներկայացուցիչ կը նշանակէ : Լիօնի շրջանը տարածուելով մինչեւ 200 քիլօմիթի ի շուրջ . հետեւեալ քաղաքները կը կազմեն . Տեսիւն 1, Բօնսպրէի 1, Վիէն 1, Վալանս 2, Բօնսպրնա 1, Բուզէն 1, Ս. էքիէն 1, Ս. Շամօ 1, Քրեզօ 1, Կրըրնօպլը - Լանսի 1 :

Յօդ. 21. — Եկեղեցական հոգաբարձութիւն . — սոյն մարմինը կ'զբաղի եկեղեցւոյ մասակարարութեամբ, բանկայի, մօմի, պսակադրութեան, մկրտութեան, բաղման, եւն. գործերով, որոնց արձանագրութիւնը կը կատարէ առանձին տնտեսի մեջ :

Յօդ. 22. — Եկեղեցական բարեգործութեան հոգ կը սանի :

Յօդ. 23. — Գարաց դասու կազմութիւնը կ'ապահովէ :

Յօդ. 24. — Գասասանական խորհուրդ . — սոյն մարմինը կը կազմուի երկու կղերական եւ երեք

աշխարհական սերասիւր, ամուսնացեալ, օրէնսգէտ անձերէ, որուն կը նախագահէ տեղւոյն Սոսնորդը . եւ ունի հետեւեալ պարսկանութիւններ :

Ա. — Կ'զբաղի ամուսնական ու լնսանեկան վեներով, կը կատարէ խղամիտ ու մանրագնին ննութիւն, նման վեներու առթիւ կուսայ համապատասխան որոշումներ, համաձայնեցնելու կամ լուծելու :

Բ. — Տնուած որոշումները Ազգ. Կեդր. վարչութեան միջոցաւ կը յղէ Ազգ. Եկեղեց. վերին իշխանութեան առ'ի վաւերացումն :

Յօդ. 25. — Կրօնական ժողով. սոյն մարմինը կը բաղկայնայ գաղութիս եւ շրջականերու հոգեւորականներէն . որոնք կը կեդրոնական Լիօնի մեջ, կ'ունենայ իր ներքական նիստերը, բարեգործելու Եկեղեցական կարգն ու սարքը, ապահովելու ժողովրդեան հոգեւոր պատշամանց սպասարկման կանոնաւորումը :

Յօդ. 26. — Կրօնական ժողովին կը նախագահէ տեղւոյն առաջնորդը :

Յօդ. 27. — Քեմիս բոլոր կղերականները պատասխանատու են կրօնական ժողովին :

Յօդ. 28. — Կրքական Մարմին. կը հաստատէ կրքական Ֆօնս մը եւ կրքարաններ, զիւրային դասախօսութիւններ, կիրակնօրեայ դասեր, նրապարակային դասախօսութիւններ : Գե-


- դարուեսական կազմակերպութեանց համագործակցութեան միում կուսայ :
- Յօդ. 29.— Տնտեսական խորհուրդ. սոյն մարմինը Ազգ. Կեդր. սնունդի եւ բեմերու ելեմսական բարւոճումով կ'ըբաղի, ինչպէս նաեւ կը հաստատէ յէս քննութեան վարչութեանց վեց-աժնեայ կամ սարեկան նիւթական գործառնութիւններն ու հաշուեկէիւր. եւ կը յղէ Ազգ. Կեդր. վարչութեան միջոցաւ Գաւառ. Ընդհ. ժողովին կցելով իր տեղեկագիրը :
- Յօդ. 30.— Տնտեսական խորհուրդը կ'ըբաղի նաեւ ժառանգական ու կտակային խնդիրներով ալ, կատարելով խղճամիտ ու մանրագնիին քննութիւն ենթարկելով գայն Ազգ. Կեդր. վարչութեան վաւերացման :
- Յօդ. 31.— Աղխատիւնամ Մարմին. կը կազմուի զուտ մարդասիրական սկզբունքներով, կ'օժանդակէ նիւթապէս գործազուրկ, իրապէս աննեցուկ աղխատներու. որոնք կը ներկայանան սոյն մարմնոյն իրենց իրական վիճակը ապացուցանող նումարիտ տուեալներով, համոզում ներշնչելու եւ նպաստաւորուելու համար անկէ :
- Յօդ. 32.— Աղխատիւնամը ունենալով իր նպաստահաւաքի եւ նպաստաբաշխի ուրոյն հանգամանք, կ'ունենայ առանցիկն իր ելեմուտք. որուն ինպաստ զանազան հասարակական ձեռնարկներ կը կատարէ :

- Յօդ. 33.— Կարմիր Խաչ. սոյն տեղական մարմինը կը նուիրուի մարդասիրական սկզբունքներու, կատարելով հետեւեալ աշխատանքներ :
- Ա.— Օգտակար դառնալու համար մասնաւորապէս երկտեղ աննեցուկ հիւանդներու եւ որբերու, կը կատարէ հանգանակութիւն. կը սարքէ երեկոյցներ, կը կազմակերպէ հանդեսներ, հայրալքելու համար դէղ ու դարման կատարուեալներու :
- Յօդ. 34.— Ազգ. Գաւառ. Ընդհ. ժողովը ու անկէ ծնունդ առած Ազգ. բոլոր մարմինները, հետի ըլլալով քաղաքական որեւէ նպատակ ունենալէ, պատրաստ եւ իւրացուցած ըլլալով այս կանոնագիրը. կը վաւերացնէ գայն 1928 փետրուար 26 քուականին ու գործադրելի կը յայտարարէ կեդրոնի եւ շրջաններու մէջ նոյնութեամբ :



Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

- Յօդ. 35.— Ազգ. Գաւառ. Ընդհ. ժողովը լուծեալ կը նկատուի երբ իր մեծամասնութիւնը կը կորսնցունէ անգամներու նրաժառուճով կամ մահով :



Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդ. 36.— Գաւառ ժողովոյ նստաւիճակը լրանալէ յետոյ Դինորոյ Ընտրութիւն կատարելու համար. Գաւառ. ժողովոյ եւ Կեդր. վարչութեան անդամները գործակցաբար կը կազմեն ընտրողական յանձնաժողով, որը կը ձեռնարկէ ընտրութեան.



2073
« Ազգային գրադարան



NL0050373

104

